ՀԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ *համայնքի ղեկավարին կից գործող «Նոր Արտամետ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» կողմից*
Ներկայացվել է՝ *համայնքի ղեկավար Յուրիկ Հովհաննիսյանի կողմից*
Հաստատվել է՝ *համայնքի ավագանու* ***12.12.2016 թ. N 49-Ն*** *որոշմամբ*

Գ. ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ 2016 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....
4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Համայնքի զարգացման ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով այդ պահանջները:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա տարիների համար հանդիսանալու է Նոր Արտամետ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի)

հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 46 որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող «Նոր Արտամետ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Նոր Արտամետ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶԾ-ն ներառում է նաև Նոր Արտամետ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Նոր Արտամետ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Նոր Արտամետի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նոր Արտամետ համայնքը երիտասարդ բնակավայր է: Հիմնադրվել է 1965թ. Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության ինստիտուտի բազայի հիման վրա: Գյուղը գտնվում է Մրտասարի հարավ - արևմտյան մասում:

Հեռավորությունը քաղաքամայր Երևանից կազմում է 18 կմ, մարզկենտրոնից՝ 40 կմ, ՀՀ սահմանից՝ 250 կմ:

Նոր Արտամետի 2 կողմով անցնում է Արզնի-Շամիրամ ջրանցքը, որը համայնքն ապահովում է ոռոգման ջրով:

Ծովի մակարդակից միջին բարձրությունը կազմում է 1350 մետր: Բնակլիմայական պայմանները նախալեռնային են: Տեղումների առատությամբ աչքի չի ընկնում. ամառները շոգ են, ձմեռները՝ մեղմ: Ուժեղ սառնամանիքներ հազվադեպ են դիտվում:

Նոր Արտամետ համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1249 մարդ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	1249
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	447
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	16
2.2	կիսակառույց տներում բնակվող	2
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	42

Համայնքի բնակչության 49.7% կազմում են տղամարդիկ և 50.3% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	1249	628	621
	մինչև 1 տարեկան	13	5	8
	1-2 տարեկան	33	14	19
	3-4 տարեկան	33	10	23
	5-6 տարեկան	31	14	17
	7-10 տարեկան	46	19	27
	11-14 տարեկան	47	22	25
	15-17 տարեկան	45	21	24
	18 և ավելի տարեկան	1001	523	478
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	149		
	Տարիքային և աշխատանքային			
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	1		1
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ			
5.	Հաշմանդամ երեխաներ	4		3
6.	Խնամակալության հանձնված երեխաներ			
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ			
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	6		6
9.	Հաշմանդամներ			
10.	Զբաղվածներ			
11.	Գործազուրկներ			
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	40		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	5		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք:

2.2 Տեղական ինքնակառավարման մարմինը

Նոր Արտամետ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին՝ իր 5 անդամներով: Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 8 աշխատակցից:

Համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում, վարչական շենք չունի, տեղակայված է Կենդանաբանության ինստիտուտի N 1 վարչական մասնաշենքում: Չնայած դրան՝ շենքային պայմանները բավարար են, գույքը նորացված է, համալրված է համակարգչային տեխնիկայով:

Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 11-ի N 42 որոշմամբ (աղյուսակ 3, 4):

Աղյուսակ 3.

Հ/հ	Կազմակեր-պության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Դրույքը	Պաշտո-նային դրույքաչափը	Հավե-լումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Համայնքապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական		1	1	410453			410453
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողա-կան		1	1	145000			145000
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	1	150000			150000
4		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	1	145000			145000
5		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	1	110000			110000
6		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-2	1	1	110000			110000
7		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-3	1	1	110000			110000
8		Հավաքարար	Տեխնիկական սպասարկ-ման		1	1	72752			72752
	Ընդամենը				8					1253205

Աղյուսակ 4.



2.3 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպման ասպարեզում խնդիրները դեռևս շատ են: Համայնքում աղբը տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրերում, որտեղ պարբերաբար կատարվում են բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է բնակչի սեփականութուն հանդիսացող անիվավոր տրակտորով շաբաթական երկու անգամ: Սակայն համայնքն աճելու միտում ունի, և աղբահանության

ծավալների մեծացման պարագայում աղբահան մեքենայի ձեռքբերումը կդառնա անհրաժեշտություն:

Համայնքն ունի գլխավոր հատակագիծ:

Համայնքում առաջնակարգ խնդիրներից մեկն էլ արտաքին լուսավորության հարցն է: Համայնքի 0, 1, 8, 9, 10, 11, 13 փողոցներն ապահովված են արտաքին լուսավորման համակարգերով ամբողջությամբ: Լուսավորման համակարգերի անխափան շահագործումն ապահովվում է համայնքի բյուջեի միջոցներից, որի հետևանքով երեկոյան և գիշերային ժամերին այդ փողոցներով երթևեկելը և՛ վարորդների, և՛ բնակիչների համար առավել անվտանգ և ապահով է:

Համայնքն ունի 24-ժամյա ջրամատակարարում: Խողովակաշարի ներքին և արտաքին ցանցերը գտնվում են շատ անմխիթար վիճակում:

Համայնքի գազաֆիկացման աշխատանքները սկսվել են 2007 թվականից և շարունակվում են մինչև օրս:

Համայնքի գերեզմանատունը պարսպապատված է:

2.4 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքն ունի 9 բազմաբնակարան բնակելի շենք՝ 80 բնակարանով: Բազմաբնակարան բնակելի շենքերի մաշվածության չափը մեծ է: Կապիտալ վերանորոգման կարիք են զգում համայնքի գրեթե բոլոր բազմաբնակարանների տանիքները:

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում են նաև 127 առանձնատները, որոնց մի մասը կառուցվել է Հայաստանում փախստականների գործերով նորվեգական գրասենյակի կողմից, մի մասը սեփական միջոցներով կառուցված բնակելի տներ են:

Համայնքի նոր ձևավորվող թաղամասում այժմ ավելի քան 20 տների շինարարություն գտնվում է տարբեր աստիճանի անավարտ վիճակում: Այստեղ դեռևս չկա խմելու ջրագծերի ցանց, ինչպես նաև թաղամասի ճանապարհները ասֆալտապատված չեն: Ջրամատակարարման հարցը լուծված է մասամբ՝ հիմնականում բնակչության

միջոցներով: Ի տարբերություն խմելու ջրի՝ համայնքի այս հատվածի համար ոռոգման ցանցի հարցը լուծված է:

Աղյուսակ 5. Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակելի առանձնատների թիվը

		քանակը, հատ	**ընդհանուր բնակելի մակերեսը, մ2**
1	**Ընդամենը բնակարաններ**	80	6072.3
2	**1 սենյականոց բնակարաններ**	10	484
3	**2 սենյականոց բնակարաններ**	17	1053.6
4	**3 սենյականոց բնակարաններ**	33	2584.6
5	**4 և ավելի սենյականոց բնակարաններ**	20	1950.1
6	**Համայնքում առկա առանձնատների /սեփական տների/ քանակը**	127	5242

2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Նոր Արտամետ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 40-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է 28220.7 հազար դրամ, ծախսերի գծով՝ 36855,2 հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ 8634,5 հազար դրամ: Նոր Արտամետ համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 11-ի թիվ 05-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է 28220.7 հազար դրամ, ծախսերի գծով՝ 37654,3 հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ 9433,6 հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 17,3 %՝ 4900,0 հազար դրամ:

Նոր Արտամետ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 44-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է 28299.7 հազար դրամ:

Բնակչության հիմնական զբաղմունքը այգեգործությունն է, մասամբ՝ անասնապահությունը: Համայնքում գործում է 5 առևտրի կենտրոն /խանութ/, որոնց հիմնական զբաղմունքը մանրածախ առևտուրն է: Ստացված բերքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է: Բերքն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն հիմնականում մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում է «ԳՏՄ Եղբայրներ» ՍՊԸ-ն, որը ջերմոցային տնտեսությունն է, աճեցնում է ծաղիկներ:

Համայնքի զարգացման համար անհրաժեշտ են մեծ կապիտալ ներդրումներ վերամշակող արտադրության տարբեր ճյուղերում, որը կնպաստի համայնքում աշխատատեղերի ստեղծմանը: Կլուծվի նաև բերքի իրացման խնդիրը:

Նոր Արտամետ համայնքում պատմամշակութային հուշարձաններ չկան:

Համայնքի տարածքում գործող միակ կրթօջախը միջնակարգ հանրակրթական դպրոցն է, որը մշտապես գտնվում է համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Համայնքապետարանի կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր՝ խթանելու կրթության մակարդակի բարելավմանը, օժանդակելու կրթօջախի առջև ծառացած խնդիրների լուծմանը, բարելավելու ինչպես շենքային, այնպես էլ գույքային պայմանները:

Մեզ համար գերխնդիրներից մեկը դպրոցի նոր շենք ունենալն է:

Մեր համայնքում 1999 թ. Հայաստանում փախստականների գործերով նորվեգական գրասենյակի կողմից կառուցվել է դպրոցի՝ 7 դասասենյակից բաղկացած քարե շենք, որը նախատեսված է 72 աշակերտի համար: Այսօր այդ դպրոցում սովորում է շուրջ 110 աշակերտ, որոնց թիվն ավելին կլիներ, եթե պայմանները բավարարեին ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Համայնքում չկան երեխաների արտադպրոցական գեղագիտական դաստիարակությանը, նրանց ունակությունների, կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը նպաստող հիմնարկներ:

Համայնքում ապրում է մինչև 6 տարեկան 110 երեխա, սակայն չկա մանկապարտեզ՝ կազմակերպելու երեխաների նախադպրոցական կրթությունը: Այդ բացը լրացվում է հարևան համայնքների համապատասխան հաստատություններում: Սակայն այստեղ էլ

ծնողների համար առաջացնում են դժվարություններ երեխաների՝ գյուղից մանկապարտեզ և մանկապարտեզից գյուղ տեղափոխման կազմակերպման գործում:

Համայնքը չունի մշակույթի տուն, եկեղեցի, մարզահրապարակներ, որի հետևանքով երիտասարդությունը զրկվում է իր ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորությունից:

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բուժկետն է, որը սպասարկում են 1 բժիշկ և 1 բուժքույր: Բուժկետը չունի շենքային պայմաններ, համապատասխան գույք և սարքավորում, գործում է փայտե վագոն-տնակում: Չնայած դրան՝ գյուղապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նոր Արտամետ համայնքում 2017-2021 թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Կոտայքի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- *Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքի իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ:*
- *Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:*

- *Աղեփների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատսպարանների և թաքստոցների կառուցում:*

Պլանավորվող տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Կոտայքի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ: Օրինակ՝ ակնկալվում է համայնքում ունենալ դպրոցական նոր ու բարեկարգ մասնաշենք, ինչպես նաև գյուղմթերքի՝ մրգի և կաթնամթերքի վերամշակման որևէ արտադրամաս:

2.7ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը ձևավորվում են հիմնականում վարչական բյուջեի միջոցների հաշվին: Ֆոնդային բյուջեն ձևավոևվում է համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդով վաճառքից ստացված եկամուտներից, տարեսկզբի ազատ մնացորդից և վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից: Համայնքում գալիք տարիներին նախատեսվում է ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ստացում՝ 50000,0 հազար դրամի չափով: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2017թ.՝ 74,7%, 2018թ.՝ 74.3%, 2019թ.՝ 74.3%, 2020թ.՝ 74,2%, 2021թ.՝ 74,3%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստացի 01.10.2016	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	60152.15	41065.82	41125	41570	42270	42975	43675
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	26259.95	25907.12	29125	29570	30270	30975	31675
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	4538.3	4545.47	5667.3	5870	5970	6075	6175
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	2645.9	2494.67	2952.3	3055	3055	3060	3060
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	45.4	73.46	52.3	55	55	60	60
	Հողի հարկ	2600.5	2421.21	2900	3000	3000	3000	3000
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	1700.4	1813.3	2500	2600	2700	2800	2900
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1700.4	1813.3	2500	2600	2700	2800	2900
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	192	237.5	215	215	215	215	215
	Տեղական տուրքեր	192	237.5	215	215	215	215	215
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	19802.9	19944.5	21757.7	22000	22500	23000	23500
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	19802.9	19944.5	21757.7	22000	22500	23000	23500
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	19802.9	19944.5	21757.7	22000	22500	23000	23500
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	1918.75	1417.15	1700	1700	1800	1900	2000
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	306.9	537.5	400	400	400	400	400
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	306.9	537.5	400	400	400	400	400
3.5	Վարչական գանձումներ	1371.85	804.65	1100	1100	1200	1300	1400
	Տեղական վճարներ	165	80	300	100	100	100	100

	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	845.4	219.8	300	300	300	300	300
	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար	361.45	504.85	500	700	800	900	1000
3.9	Այլ եկամուտներ*	240	75	200	200	200	200	200
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	240	75	200	200	200	200	200
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	28578.9	5725	10000	10000	10000	10000	10000
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	28578.9	5725	10000	10000	10000	10000	10000
	Հողի իրացումից մուտքեր	28578.9	5725	10000	10000	10000	10000	10000
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	5313.3	9433.7	2000	2000	2000	2000	2000
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	5313.3	9433.7	2000	2000	2000	2000	2000
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	5313.3	9433.7	2000	2000	2000	2000	2000

Աղյուսակ 7. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն (եկամտների և ծախսերի կանխատեսումը)

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. տարեկան պլան	2017թ. կանխ.	2015թ, փաստ.նկատ %	2018թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2019թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2020թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	20121թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %
Ընդամենը եկամուտներ	26344	29125	110.6	29515	112	30215	114.7	30915	117.4	31615	120
Հարկային եկամուտներ, որից	4340	5452.3	125.6	5600	129	5700	131.3	5800	133.6	5900	135.9

Հողի հարկ	2600	2900	111.5	3000	115.4	3000	115.4	3000	115.4	3000	115.4
Գույքահարկ	1740	2552.3	146.7	2600	149.4	2700	155.2	2800	160.9	2900	166.7
Տեղական տուրքեր	200	215	107.5	215	107.5	215	107.5	215	107.5	215	107.5
Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	19804	21757.7	109.9	22000	111.1	22500	113.6	23000	116.1	23500	118.7
Այլ եկամուտներ	2000	1700	85	1700	85	1800	90	1900	95	2000	100
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	35000	10000	28.57	10000	28.57	10000	28.57	10000	28.57	10000	28.57
Տարեսկզբի ազատ մնացորդ	5313.3	0	0	2000	37.64	2000	37.64	2000	37.64	2000	37.64
Ընդամենը	66658	39125	58.7	41515	62.28	42215	63.33	42915	64.38	43615	65.43
Ընդամենը ծախսեր	66658	39125	58.69	41515	62.28	42215	63.33	42915	64.38	43615	65.43
Ընթացիկ ծախսեր, այդ թվում	26345	29125	110.6	29515	112	30215	114.7	30915	117.3	31615	120
Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ	15100	16755	111	16755	111	16800	111.3	16800	111.3	16900	111.9
Ապրանքն. գնման և ծառ. վճ. ծախս	8655.2	9799	113.2	9900	114.4	9950	115	10400	120.2	10500	121.3
Սոցիալական նպաստներ	1250	1050	84	1200	96	1350	108	1500	120	1950	156
Այլ ծախսեր	1339.7	1521	113.5	1660	123.9	2115	157.9	2215	165.3	2265	169.1
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում	40313	10000	24.81	12000	29.77	12000	29.77	12000	29.77	12000	29.77
Հիմնական միջոցներ	35000	10000	28.57	10000	28.57	10000	28.57	10000	28.57	10000	28.57
Տարեսկզբի ազատ մնացորդ	5313.3	0	0	2000	37.64	2000	37.64	2000	37.64	2000	37.64

2.8 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. *Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,*
2. *Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,*
3. *Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստումը, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացումը, հանգստի գոտիների ստեղծումը,*
4. *Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:*

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

2.9 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

1) *Հեռանկարային զարգացման համար համայնքի բարենպաստ աշխարհագրական դիրքը. Նոր Արտամետ համայնքը տեղակայված է մայրաքաղաք Երևանից 18 կմ, Աբովյանից 4 կմ, Նոր Հաճնից 1.5 կմ հեռավորության վրա:*
2) *Համայնքի 2 կողմով անցնում է Արզնի-Շամիրամ ջրանցքը, որը համայնքն ապահովում է ոռոգման ջրով:*
3) *Համայնքն ապահովված է նաև շուրջօրյա խմելու ջրամատակարարմամբ:*
4) *Ներհամայնքային փողոցները հիմնականում ասֆալտապատ են և ապահովված արտաքին լուսավորությամբ:*
5) *Բնակարանային շինարարության հետագա զարգացման համար անհրաժեշտ տարածքների առկայությունը.*
6) *Համայնքում բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների առկայությունը.*
7) *Համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապը և փոխհամաձայնեցումը.*
8) *Համայնքի ղեկավարի երկարամյա փորձը և ազգաբնակչության վստահությունը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

1) *արտադրական կազմակերպությունների բացակայությունը, աշխատատեղերի սակավությունը, գործազրկությունը.*
2) *մանկապարտեզի, հոգևոր և մշակութային հիմնարկների բացակայությունը, դպրոցի շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությունը.*
3) *երիտասարդության աշխատանքային և ժամանցային վայրերի բացակայությունը.*
4) *ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի անմխիթար վիճակը.*
5) *համայնքը սնուցող էլեկտրական հոսանքի ցածր լարումը.*
6) *գազաֆիկացման ծավալների ավելացման անհրաժեշտությունը.*
7) *նոր թաղամասում կոմունալ ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտությունը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- *Մեծ քանակի և որակի աշխատուժի առկայությունը,*
- *Գյուղմթերքի վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը*
- *Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը (հիմնական նպատակը համայնքաբնակների համար աշխատատեղերի ստեղծում)*
- *Անասնապահության և այգեգործության զարգացումը:*

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- *Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է կենտրոնացված համակարգով: Ջրամատակարարման և կոյուղու ցանցի մաշվածության պատճառով առաջացած վթարները կարող են առաջ բերել համաճարակներ և հիվանդություններ:*
- *Լուրջ սպառնացող վտանգ է հանդիսանում նաև բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ,հեղեղումներ, կարկտահարություն, սողանքների առաջացում):*

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Նոր Արտամետի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման տեսլականն է՝ Նոր Արտամետ համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է :

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ ռազմավարությունը՝

- ✓ *Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություն.*
- ✓ *Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ.*
- ✓ *Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը.*
- ✓ *Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ .*
- ✓ *Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը.*

- ✓ *Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը:*

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ *Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),*
- ✓ *Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը՝ արտահայտված տոկոսով,*
- ✓ *Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ՝ արտահայտված տոկոսով:*

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	20.3%	19%	18%	17%	16%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	1,03%	1,01%	1,02%	1,02%	1,04%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1%	1.5%	1.7%	2%	2.5%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- ✓ *Հանդիսությունների սրահի գազաֆիկացում և ջեռուցման համակարգի տեղադրում.*
- ✓ *Համայնքի փողոցների և բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում.*
- ✓ *Խմելու ջրագծերի վերանորոգում և կառուցում.*
- ✓ *Գազաֆիկացում.*
- ✓ *Արտաքին լուսավորության աշխատանքների կատարում.*
- ✓ *Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման արտադրամասերի և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում.*
- ✓ *Ջրահեռացման ցանցի վերանորոգում*
- ✓ *Բազմաֆունկցիոնալ կանգառների տեղադրում:*

Համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ✓ *Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ.*
- ✓ *Ունենալ բարեկարգ բազմաբնակարանային ֆոնդ.*
- ✓ *Բարելավել համայնքապետարանի շենքային և գույքային պայմանները.*
- ✓ *Բարձրացնել կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը.*
- ✓ *Բարելավել խմելու ջրամատակարարման ծառայությունների որակը.*
- ✓ *Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից.*
- ✓ *Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ .*
- ✓ *Ունենալ բազմաֆունկցիոնալ կանգառներ.*
- ✓ *Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը.*
- ✓ *Ստեղծել համայնքում հանդիսություններ կազմակերպելու բավարար պայմաններ.*
- ✓ *Արդյունավետ օգտագործել ոռոգման ջրի պաշարները.*
- ✓ *Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը:*

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

« Հանդիսությունների սրահի գազֆիկացում և ջեռուցման համակարգի տեղադրում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել և կատարել համայնքի բյուջեից համաֆինան-սավորում շենքի գազֆիկացման և ջեռուցման համակարգի տեղադրման համար						
Ծրագրի անմիջական նպատակ **Հանդիսությունների սրահի շենքի պահպանումն ու առավել արդյունավետ օգտագործումը: Համայնքի բյուջեի լրացուցիչ եկամուտների ավելացումը**		Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020	2021
				2000	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.							
		Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (աշխատատեղեր)				
			2016	2017	2018	2019	2020	2021
			0					
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Նախագիծ նախահաշվի կազմում 2. Գումարի հավաքում 3. Մրցույթի հայտարարում 4. Պայմանագրի կնքում 5. Աշխատանքների կատարում							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 400.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 1600.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2000.0 հազար դրամ							
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ								
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները							
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.							
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքային սեփականություն հանդիսացող նորակառույց հանդիսությունների սրահը անհրաժեշտ է ավարտին հասցնել հիշյալ ծրագրի իրականացմամբ, որը համայնքի բյուջեի համալրման համար լրացուցիչ եկամուտի աղբյուր է:							

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

« Համայնքի փողոցների և բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել ճանապարհների բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար:						
Ծրագրի անմիջական նպատակ **Ունենալ առավել բարեկեցիկ համայնք**	Ներհամայնքային ճանապարհներ / քմ /						
	Ցուցան իշներ	Ելակետ ային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2500	3000	3000	4000	4000	4000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ **Ունենալ բարեկեցիկ համայնք**	1. Համայնքային ճանապարհների վերանորոգում և կառուցում / հազար դրամ /						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			15000	15000	15000	15000	10000
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում 2. Համայնքի ներդրում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 70000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 70000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նոր Արտամետ համայնքն ունի 5 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ: Ներհամայնքային ճանապարհները, ասֆալտապատ լինելով, մշտապես պահանջում են վերանորոգում, իսկ նոր կառուցվող թաղամասի ճանապարհները գրունտային են						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ

« Խմելու ջրագծերի վերանորոգում և կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել խմելու ջրագծերի վերանորոգման և կառուցման աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային միջոցների գույքի ավելացում:						
Ծրագրի անմիջական նպատակ **Համայնքի ջրագծերի վերանորոգման և նոր կառուցվող թաղամասի համար խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ**		Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ **Համայնքի բնակչությանը հատկապես ամռանը շուրջօրյա ջրամատակարարման ապահովումն է:**	Հին խողովակների փոխարինում և նոր կառուցվող ջրագիծ (գծմ)							
		Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020	2021
			0	1000	1000	0	0	0
	Նոր կառուցվող ջրագիծ (գծմ)							
		Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020	2021
				2000	2500	3500	4500	5000
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Դիմում ոլորտը սպասարկող կազմակերպությանը 2. Պայմանագրի կնքում 3. Համայնքի ներդրում 4. Աշխատանքների կատարում							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 45000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 45000.0 հազար դրամ							
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ								
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները							
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.							
Ծրագրի համառոտ նկարագրություն	Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրամատակարարման ներհամայնքային համակարգը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի առջև: Ինչպես նաև նոր կառուցվող թաղամասի բնակիչները ապահոված կլինեն խմելու ջրով:							

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 4

« Գազաֆիկացում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել գազաֆիկացման աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային միջոցների գույքի ավելացում:						
Ծրագրի անմիջական նպատակ **Համայնքում գազաֆիկացման ավարտ**							
	Յուցան իշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			20000	10000	5000	5000	5000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ **Թեթևացնել բնակչության առօրյան, որից կօգտվի համայնքի բնակչությանը 40%:**	1. Գազաֆիկացումից օգտվող ընտանիքների թիվը						
	Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	50	80	100	115	130
	Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում 2. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում 3. Մրցույթի հայտարարություն 4. Պայմանագրի կնքում 5. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 45000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 45000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի նոր կառուցվող թաղամասը, ինչպես նաև 11-րդ և 12-րդ փողոցները գազաֆիկացված չեն: Գազաֆիկացնելու արդյուքնում բնակիչները կլուծեն ձմեռվա ջեռուցման խնդիրը:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 5

« Արտաքին լուսավորության աշխատանքների կատարում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային միջոցների գույքի ավելացում:

Ծրագրի անմիջական նպատակ

Ունենալ արտաքին լուսավորությունով ապահովված, անվտանգ և մաքուր փողոցներ

Արտաքին լուսավորության անցկացում / հազար դրամ /

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021
		5000	4000	4000	4000	4000

Ծրագրի միջանկյալ արդյունքներ

Ապահովել բնակչությանը անվտանգ և լուսավոր փողոցներով, որից կօգտվի համայնքի բնակչությանը 80%:

1. Լուսավորությունից օգտվող բնակչության թիվը

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (տնտեսություն)				
	2016	2017	2018	2019	2020	2021
	0	200	320	400	460	520

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
	2016	2017	2018	2019	2020	2021

Ծրագրի հիմնական գործողությունները	1. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում 2. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում 3. Մրցույթի հայտարարություն 4. Պայմանագրի կնքում 5. Աշխատանքների կատարում
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 25000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 25000.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բոլոր բնակելի թաղամասերում փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման ավարտ

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 6

« Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման արտադրամասերի և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներգրավել ներդրողների համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրության իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ **Գյուղատնտեսության զարգացում, մթերքների վերամշակման հնարավորությունների ստեղծում**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ **Հողերի արդյունավետ օգտագործում, այգեգործության զարգացում**	1. Համախառն բերքը / ցենտներ /						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1098	1500	2000	2500	2800	3000
	2. Ինտենսիվ այգիների հիմնում / հա /						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		10	12	17	25	35	40
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. ներգրավում 2. Համայնքի կողմից ներդրում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 200.000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 200.000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասեր, իսկ համայնքի կողմից ներդրումը կլինի այգիների հիմնումը:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 7

« Ջրահեռացման ցանցի վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել բազմաբնակարան շենքերի ջրահեռացման ցանցի վերանորոգման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ **Համայնքում հին կոյուղագծերի վերանորոգում և համայնքի նոր կառուցվող թաղամասի համար կոյուղու կառուցում:**	Կոյուղու խողովակաշարի երկարությունը						
	Յուցան իշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (գծմ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1000					
Ծրագրի միջանկյալ արդյունքներ **Կեղտաջրերի արտաքին մակերես դուրս գալու հավանականության փոքրացում, կեղտաջրերի հեռացման աշխատանքների կրճատում՝ ֆինանսական միջոցների տնտեսում:**	1.Կոյուղու խողովակաշարի վերանորոգում						
	Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (գծմ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1000	1000				
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Դիմում կոյուղին սպասարկող ընկերությանը 2. Մրցույթի հայտարարում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 7000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 7000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Շատ վատ վիճակում է գտնվում ջրահեռացման ներհամայնքային համակարգը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի առջև:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 8

« Բազմաֆունկցիոնալ կանգառների տեղադրում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել կանգառների կառուցման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ **Տրանսպորտին սպասող բնակչության անվտանգության և հարմարավետության ապահովում**	Կանգառների քանակը						
	Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հատ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
			2	2			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ **Կագառների տեղադրում սահմանված վայրերում**	1.Կանգառների կառուցում						
	Յուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հազար դրամ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000	1000			
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Դրամական միջոցների հավաքագրում 2. Մրցույթի հայտարարում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 2000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կանգառների տեղադրումը սահմանված վայրում կկաարգավորի երթևեկությունը և կապահովի ուղևորների անվտանգությունը :						

4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Նոր Արտամետ համայնքի ՀԶԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
Նոր Արտամետ համայնք
(2017-2021 թթ.)

Հազ.դրամ

	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները					
			2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պետական դրամաշնորհներ	Արտաքին պետական դրամաշնորհներ	Բարեգործություն/խմիսարություն	Դուրս կազմակերպությունների/կազմակերպությունների միջոցներ	Այլ աղբյուրներ
1	Հանդիսությունների սրահի գազֆիկացում և ջեռուցման համակարգի տեղադրում	2000	2000										
2	Համայնքի փողոցների և բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում	70000	15000	15000	15000	15000	10000	50000					20000

3	Խմելու ջրագծերի վերանորոգում և կառուցում	7000	7000										
4	Գազաֆիկացում	45000	20000	15000	5000	5000	5000					45000	
5	Արտաքին լուսավորության աշխատանքների կատարում	25000	5000	4000	4000	4000	4000	25000					
6	Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման արտադրամասերի և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում	200 000										200 000	
7	Ջրահեռացման ցանցի վերանորոգում	7000	7000					1000					6000
8	Բազմաֆունկցիոնալ կանգառների տեղադրում	2000	1000	1000				2000					

5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 10-ում ներկայացված է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 10. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ
(2017-2021 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաքագրման մեթոդաբանություն		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
																	Կիսամյակա յին	Տարեկան		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																				
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)																		X	Կոտայքի մարզպետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց

2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																				
Հանդիսությունների սրահի գազֆիկացում և ջեռուցման համակարգի տեղադրում																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*
Համայնքի փողոցների և բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*
Խմելու ջրագծերի վերանորոգում և կառուցում																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*
Գազաֆիկացում																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*
Արտաքին լուսավորության աշխատանքների կատարում																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*
Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման արտադրամասերի և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*
Ջրահեռացման ցանցի վերանորոգում																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*
Բազմաֆունկցիոնալ կանգառների տեղադրում																		X	*Համայնքապետարան*	*Փաստաթղթային ուսումնասիրություն*

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021 թթ. ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: